ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 676.4 մլրդ դրամ **(առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցների)**, իսկ ծախսերը՝ 824.7 մլրդ դրամ **(առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցների)**, որոնք տարեկան ծրագիրը կատարել են համապատասխանաբար 75.3%-ով և 92%-ով:

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի եկամուտները նվազել են 10.9%-ով կամ 82.8 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 15.9%-ով (98.7 մլրդ դրամով) նվազել են հարկերն ու տուրքերը և 2%-ով (2.1 մլրդ դրամով)՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները: Նույն ժամանակահատվածում 47.2%-ով (13.8 մլրդ դրամով) աճել են այլ եկամուտները և 110.4%-ով (4.3 մլրդ դրամով)՝ պաշտոնական դրամաշնորհները:

Պետական բյուջեի եկամուտների 77.2%-ը ձևավորվել է հարկերի ու տուրքերի, 15.2%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6.4%-ը՝ այլ եկամուտների և 1.2%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 19.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 17 մլրդ դրամի դիմաց:

2009 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 522.4 մլրդ դրամի հարկեր ու տուրքեր՝ 71.6%-ով կատարելով տարեկան ծրագիրը: 2008 թվականի համեմատ հարկային եկամուտները նվազել են 15.9%-ով կամ 98.7 մլրդ դրամով: Ընդ որում, գրեթե բոլոր հարկատեսակների գծով, բացառությամբ եկամտահարկի և հաստատագրված վճարների, արձանագրվել է մուտքերի անկում:

Հարկերի ու տուրքերի 48.7%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Այն կազմել է շուրջ 254.2 մլրդ դրամ և 20.2%-ով կամ 64.2 մլրդ դրամով զիջել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից շուրջ 168.9 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 85.3 մլրդ դրամը՝ ապրանքների և

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

ծառայությունների ներքին շրջանառությունից: Ընդ որում, նվազել են և՛ ներմուծումից, և՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

Պետական բյուջե մուտքագրված հարկերի ու տուրքերի 8.2%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 42.8 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 28.5 մլրդ դրամ, որից 13.5 մլրդ դրամը՝ բենզինի և դիզելային վառելիքի, 10.5 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 14.3 մլրդ դրամ, որից շուրջ 8 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկը նվազել է 6.8%-ով կամ ավելի քան 3.1 մլրդ դրամով, ինչը պայմանավորված է հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերի 14.4%-ով (4.8 մլրդ դրամով) նվազմամբ: Նույն ժամանակահատվածում հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից մուտքերն ավելացել են 13.5%-ով կամ 1.7 մլրդ դրամով:

Հաշվետու տարում պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 15.7%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 81.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 5.1%-ով կամ 4.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական ձեռնարկությունների, ոչ ռեզիդենտների և պետական ձեռնարկությունների կողմից վճարված շահութահարկի նվազմամբ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ զգալի աճ է արձանագրվել ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի գծով՝ 35.1% կամ 2.7 մլրդ դրամ: Ավելացել են նաև մեկ տոկոս դրույքաչափով, ինչպես նաև ոչ ռեզիդենտից աղբյուրի մոտ վճարված շահութահարկի մուտքերը՝ համապատասխանաբար 8.8 և 59.4 տոկոսով:

2009 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել 60.2 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի ու տուրքերի 11.5%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 12%-ով կամ 6.5 մլրդ դրամով:

Հաշվետու տարում մաքսատուրքը կազմել է ավելի քան 25.1 մլրդ դրամ՝ 32.7%-ով կամ 12.2 մլրդ դրամով զիջելով 2008 թվականի նույն ցուցանիշը և ապահովելով պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 4.8%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական տուրքի գծով ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են 19 մլրդ դրամ կամ ծրագրված մուտքերի 79.3%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքը նվազել է

14.6%-ով կամ 3.3 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի, պետական գրանցման և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող տուրքերի նվազմամբ:

2009 թվականին գործունեության առանձին տեսակներից գանձվել են շուրջ 22.8 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ 12.1%-ով կամ 2.5 մլրդ դրամով գերազանցելով 2008 թվականի համապատասխան ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է խաղատների գործունեության կազմակերպման, դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործման և հանրային սննդի ոլորտում գործունեության իրականացման համար գանձվող հաստատագրված վճարների աճով:

Հաշվետու տարում պետական բյուջե է մուտքագրվել 330.4 մլն դրամ պարզեցված հարկ, որը 95.1%-ով կամ 6.4 մլրդ դրամով զիջել է նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ պայմանավորված 2009 թվականի հունվարի 1-ից «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքի գործողության դադարեցմամբ:

2009 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 6.1 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերը նվազել են 38.6%-ով կամ 3.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման, այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող բնապահպանական վճարների նվազմամբ:

Հաշվետու տարում այլ հարկերից պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 10 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 2.2 մլրդ դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին և կոնցեսիոն վճարը, 2.9 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 1.1 մլրդ դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 2 մլրդ դրամ՝ հարկային օրենսդրությունը խախտելու համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 258.3 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունները և 1.5 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն ընդհանուր առմամբ նվազել են 50.8%-ով կամ 10.3 մլրդ

դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի ու կոնցեսիոն վճարի և ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարի նվազմամբ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 102.9 մլրդ դրամ և տարեկան ցուցանիշը կատարել 80.1%-ով: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարները նվազել են 2%-ով կամ 2.1 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ստացվել են ավելի քան 8.1 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ և 12.7%-ով գերազանցել տարեկան ծրագրված ցուցանիշը: Նշված գումարից ավելի քան 4.4 մլրդ դրամը ստացվել է Եվրամիությունից՝ Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների աջակցության նպատակով, 1.3 մլրդ դրամը՝ Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար, 1.2 մլրդ դրամը՝ Եվրամիության պարենային ապահովության ծրագրի շրջանակներում, շուրջ 737 մլն դրամը՝ «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում Ճապոնիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից: Եվս 511.8 մլն դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար: 2009 թվականի ընթացքում ստացված դրամաշնորհները 2.1 անգամ գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2009 թվականին կազմել են 43 մլրդ դրամ և 33.4%-ով գերազանցել տարեկան ծրագրային ցուցանիշը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ որոշ եկամտատեսակներ, մասնավորապես՝ բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները և ՀՀ ռեզիդենտներին պետության տրամադրած վարկերի օգտագործման տոկոսավճարներն արդեն իսկ գերազանցել են տարեկան ծրագիրը՝ համապատասխանաբար 2.7 և 11.3 անգամ: Բացի այդ, ծրագրի գերազանցում է արձանագրվել նաև իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի գծով և տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես

սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից մուտքերի գծով, որոնք կազմել են համապատասխանաբար 5.7 մլրդ դրամ, 214.4 մլն դրամ և 63.9 մլն դրամ՝ նախատեսված համապատասխանաբար 4.6 մլրդ դրամի, 60 մլն դրամի և 38.4 մլն դրամի դիմաց: 2008 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 47.2%-ով կամ 13.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ռադիոհաճախականության օգտագործման վճարի, բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի աճով, ինչպես նաև ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից կատարված վճարումներով:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 824.7 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 92%-ը: Մասնավորապես՝ 709.5 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 115.2 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Բյուջեի ծախսերից 17.9 մլրդ դրամը կատարվել է պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին: 2008 թվականի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 8.5%-ով կամ 64.8 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների, պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման, աշխատավարձի և նպաստների ծախսերի աճով, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 709.5 մլրդ դրամ՝ 94.7%-ով կատարելով տարեկան ծրագիրը և 10.5%-ով կամ 67.2 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Ընթացիկ ծախսերից 70.8 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, 5.3 մլրդ դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարներին, որոնք կազմել են տարեկան ծրագրի համապատասխանաբար 97.7%-ը և 93.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 19.5%-ով և 6.9%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերմանը պետական բյուջեից հատկացվել է շուրջ 152.7 մլրդ դրամ՝ 13.5%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը և ապահովելով տարեկան ծրագրի 90.8% կատարողական: 2009 թվականին շուրջ 16.2 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով տարեկան ծրագրի 96.8%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 8.8 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 7.4 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2008 թվականի նույն

ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 46.4%-ով կամ 5.1 մլրդ դրամով, որը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով: Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 19 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով տարեկան ծրագրի 92.2%-ը և 13.7%-ով զիջելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են 79.7 մլրդ դրամ, որից 71.2 և 7.5 մլրդ դրամը համապատասխանաբար պետական հատվածի այլ մակարդակներին տրամադրված ընթացիկ և կապիտալ դրամաշնորհներն են, 946.5 մլն դրամը՝ միջազգային կազմակերպություններին տրամադրված ընթացիկ դրամաշնորհները: Մասնավորապես՝ 100%-ով կատարվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորումը՝ կազմելով 27.5 մլրդ դրամ: Դրամաշնորհների տարեկան ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 87.2%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով:

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 33.9%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 240.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 98.5%-ը: Մասնավորապես՝ 175.9 մլրդ դրամ են կազմել կենսաթոշակները (98.8%), 64.3 մլրդ դրամ՝ նպաստները (97.7%): 2008 թվականի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն աճել են 14.6%-ով, իսկ նպաստները՝ 18.1%-ով:

2009 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 115.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 78.2%-ը: Մասնավորապես՝ 125.9 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը և շուրջ 10.7 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: 2008 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 10.5%-ով կամ 14.8 մլրդ դրամով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 53.6%-ով կամ 12.3 մլրդ դրամով:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել է 148.3 մլրդ դրամ պակասուրդով **(առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցների)**՝ նախատեսված 1.4 մլրդ դրամ հավելուրդի փոխարեն: Նշենք, որ նախորդ տարի պետական բյուջեն կատարվել էր 771.7 մլն դրամ պակասուրդով: Հաշվետու տարում ֆինանսավորման ներքին աղբյուրների գծով արձանագրվել է ավելի քան 110.7 մլրդ դրամ հավելուրդ կամ տարեկան ծրագրի 42.6%-ը՝ նախորդ տարվա 25.9 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ֆինանսավորման արտաքին աղբյուրների գծով անցած

ժամանակահատվածում արձանագրվել է 259 մլրդ դրամ պակասուրդ կամ տարեկան ծրագրի 100.1%-ը՝ նախորդ տարվա 25.1 մլրդ դրամ հավելուրդի դիմաց:

Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում ավելի քան 45.4 մլրդ դրամ են կազմել գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը՝ 81.7%-ով գերազանցելով տարեկան ծրագրով նախատեսված ցուցանիշը: 2009 թվականին շարունակվել է ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը: Այս նպատակով հատկացվել է 1.0 մլն դրամ: Մուրհակների մարման նպատակով տարեկան ծրագրով նախատեսված գումարն ամբողջությամբ հատկացվել է՝ կազմելով 2.0 մլրդ դրամ: Ամբողջությամբ տրամադրվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարման նպատակով նախատեսված գումարը՝ կազմելով 1.2 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են -152.9 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 54.3%-ը: Մասնավորապես՝ անցած ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 100.9 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 94.4%-ը: Նշված գումարից շուրջ 97.6 մլրդ դրամը Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված վարկի միջոցներից փոխանցվել է ԿԲ-ում բացված դեպոզիտային հաշվին՝ տնտեսավարող սուբյեկտներին վարկեր տրամադրելու նպատակով: 3.0 մլրդ դրամի վարկ է տրամադրվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին: Ավելի քան 182.9 մլն դրամի վարկեր են տրամադրվել բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարություն իրականացնելու նպատակով: 69.9 մլն դրամ հատկացվել է «Կանազ» ԲԲԸ-ի ֆինանսական պարտավորությունների մարմանը: Տրամադրված վարկերի վերադարձից մուտքերը կազմել են շուրջ 15.1 մլրդ դրամ:

2009 թվականին Ռուսաստանի Դաշնության տրամադրած 185.1 մլրդ դրամ պետական վարկի միջոցները ներդրվել են գանձապետարանում բացված կայունացման դեպոզիտային հաշվին, որից հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե է փոխանցվել 121.0 մլրդ դրամ: Նշված գումարից ֆինանսավորվել է 124.1 մլրդ դրամ, որից փաստացի օգտագործվել է 110 մլրդ դրամը: Անցած տարվա ընթացքում 3.1 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները:

2009 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման արտաքին աղբյուրները կազմել են 259 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 100.1%-ը: Մասնավորապես՝ ավելի քան 33.1 մլրդ դրամ միջպետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջպետական վարկի գծով կատարվել է 61.9 մլն դրամի վճարում, որից 29.5 մլն դրամը 2008 թվականի պարտավորությունն է: Այն Վրաստանի

կողմից վճարվել է սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ 2008 թվականի դեկտեմբերին, սակայն միասնական գանձապետական հաշվին մուտքագրվել է 2009 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 217.4 մլն դրամ:

2009 թվականին արտաքին դոնորների կողմից տրամադրվել են շուրջ 298.7 մլրդ դրամի վարկային միջոցներ, որից 185. 1 մլրդ դրամը՝ ՌԴ կառավարության, 57.4 մլրդ դրամը՝ Արժույթի միջազգային հիմնադրամի, 24.8 մլրդ դրամը՝ Զարգացման միջազգային ընկերակցության և 31.4 մլրդ դրամը՝ Ասիական զարգացման բանկի կողմից:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է ավելի քան 6.3 մլրդ դրամ, որից ավելի քան 4.4 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը: Բացի այդ, 839.4 մլն դրամ է տրամադրվել էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման համակարգի ծրագրի գծով Ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 524.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 232 մլն դրամ՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 34.5 մլն դրամ՝ ԱԷԿ-ի վառելիքի չոր պահպանման համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը, 182.6 մլն դրամ՝ Բարձր լարման ցանցերի համակարգերի վերանորոգման ծրագրի և 87.3 մլն դրամ՝ Քանաքեռ ՀԷԿ-ի վերականգնման անհետաձգելի օգնության ծրագրի գծով Գերմանիայի դաշնային հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը: